community

The New Apostolic Church around the world

03/2018/AM

Շրջանային առաքյալ Բերնդ Քոբերշթայնն անցնում է հանգստի

Խմբագրական՝ Հիսուս Քրիստոսով ոգևորված

Ժամերգություն՝ Հիսուսի հետ քայլել ջրի վրայով

Եկեղեցական ուսմունք՝ Ողորմածությունից ընտրված - ինչու՞:

New Apostolic Church
International

Ոգևորվել Հիսուս Քրիստոսի համար

ՕՄԸ գլխավոր քարտուղար

Սիրելի հավատքի եղբայրներ և քույրեր,

Ավետարանն ամփոփում է Աստծո փրկության գործունեությունը Հիսուսի ծննդով, խաչի վրա նրա մահով,նրա հարությամբ և նրա գալուստով: Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատը և ջրով ու Սուրբ Հոգով վերստին ծնվելը ճանապարհն է Աստծո հետ հավիտենական միասնության համար: Դա Ավետրանն է, դա բարի լուրն է:

Այս Ավետարանը մենք պետք է փոխանցենք մեր երեխաներին և մեր մերձավորներին: Այո, մենք ընտրվել և ուղարկվել ենք որպես քրիստոնյաներ այդ կրակը տարածելու: Դա կլինի միայն այն դեպքում, երբ այդ կրակը մեր մեջ կվառվի: Դա պետք է մեր սրտերից թռչի՝ մյուսների սրտերը, այլապես դա չի գործի:- Ինչպե՞ս դա, շատ կոնկրետ, հնարավոր կլինի:

Մենք պետք է էլ ավելի շատ զբաղվենք Ավետարանով : Դա մեզ Աստծո սերը մեր՝ մարդկանցս հանդեպ ավելի հասկանալի և մեծ կդարձնի:

Մենք պետք է մեր երեխաների և մերձավորների հետ Ավետարանի մասին խոսենք: Այդ դեպքում նրանք կիմանան Աստծո, մեր ճանաչողությունների և մեր մեծ նպատակի մասին:

Մենք պետք է մեր երեխաների ու մերձավորների հետ միասին աղոթենք: Աղոթքով մենք կապրենք, որ Աստված ներկա է, Աստված լսում է և պատասխանում:

Այդ ամենը շատ դեպքերում մի քիչ ժամանակ է արժենում, ինքնահաղթահարում և ջանք: Բայց, խնդրում եմ, օգնեք այդ կրակը տարածելուն: Ժամանակ գտեք այդ կրակը երեխաներին, մերձավորներին փոխանցելու:

Աստծո սերը բոլոր մարդկանց հանդեպ ոգևորում է մեզ: Եկեք մենք էլ մեր երեխաներին ու մերձավորներին Աստծո սիրով ոգևորենք:

Սրտագին բարևներ և Աստծո օրհնանքը Հիսուս Քրիստոսին ընտրելու գործում

Ձեր՝

Ժան-Լյուք Շնայդեր

Հիսուսի հետ քայլել ջրի վրայով

,,Երիտասարդների համաժողովի,, առիթով շրջանային առաքյալ Ջոն Քրիլը 2018- ի փետրվարի 16-18-ը իր աշխատանքային տարածքի 14-35 տարեկան բոլոր երիտասարդներին հրավիրել էր Քափշտատ:

Լուսանկարը՝ ՆԱԵ Հարավային Աֆրիկա

Մատթեոս 14,29

,,Եվ նա ասաց՝ արի: Եվ Պետրոսը նավակից իջնելով՝ քայլեց ջրի վրայով ու եկավ Հիսուսի մոտ,,:

Սիրելի քույր-եղբայրներ, առանձնահատուկ մի բան է այստեղ գտնվելը և ժամերգությունն այսպիսի մեծ ու հրաշալի շրջանակով ապրելը: Ես գիտեմ, որ դուք ինձ չեք կարողանում տեսնել: Եթե շատ հեռու եք, էկրանի վրա տեսնում եք միայն մի մուգ կետ և չեք ճանաչում ինձ: Մենք պարզապես շատ հեռու ենք միմյանցից:

Սա մի գեղեցիկ պատկեր է: Դա ցույց է տալիս, թե ես ինչպես եմ ինձ զգում այս առավոտ: Երբ ես տեսնում եմ ձեզ, երբ մտածում եմ մեր մեջ Աստծո ներկայության մասին, ինձ շատ փոքր եմ զգում և գիտակցում եմ, որ ես ընդհամենը մի փոքր գործիք եմ Աստծո ձեռքում: Եվ ես ուզում եմ նաև այդպես փոքր մնալ: Սակայն, մեր ցանկությունն է և մեր համոզմունքը, որ Հիսուս Քրիստոսը մեր մեջ է: Եվ դա կարող են բոլորն ապրել: Հիսուսը ինձնից հեռու չէ, նա հենց իմ կողքին է: Եվ եթե մենք այսօր այստեղ

հազարավորներ ենք, Հիսուսը մեզ հետ է և մեզ շատ մոտիկ:

Դուք գիտեք, որ երբ Հիսուսը եկավ Երիքով, նրան սպասում էր մարդկանց մի մեծ բազմություն: Այնտեղ էր նաև Զակքեոս անունով մի մարդ: Նա ուզում էր Տիրոջը տեսնել, բայց մարմնով փոքրահասակ էր: Մյուս մարդիկ նրան չէին սիրում: Նա այնքան էլ ազնիվ չէր: Ոչ ոք նրա վրա ուշադրություն չէր դարձնում: Սակայն, երբ Հիսուսը քաղաք եկավ, տեսավ այդ մարդուն: Նա գիտեր, որ Զակքեոսը մյուս մարդկանց կողմից արհամարհվում է: Բայց Հիսուսը գնաց նրա տուն:

Բեթեզդա ավազանի մոտ 38 տարի պառկած էր մի մարդ ու սպասում էր: Ոչ մի մարդ նրա մասին չէր հոգում: Բոլորը հեգնում էին նրան: Սակայն, Հիսուսը տեսավ հենց այդ մարդուն, այդ մոռացվածին և բժշկեց նրան:

Մի օր, երբ նա ուսումնասիրում էր մարդկանց, թե ինչպես են նրանք զոհաբերություն մատուցում տաճարին, Հիսուսը տեսավ մի աղքատ այրու, ով զոհաբերեց երկու լումա: Այնտեղ գտնվող բոլոր մարդկանց համար նրա զոհաբերածը ոչինչ էր, նշանակություն չուներ: Սակայն, Հիսուսը տեսավ դա և ասաց մյուսներին, թե ինչ կարևոր էր այդ այրու լուման:

Իմ սիրելի քույր-եղբայրներ, հավանաբար ձեզնից մի քանիսն ունեն հետևյալ զգացումը. ,, Ես իսկապես մաս չեմ կազմում միասնության: Ես ինձ անտեսված եմ զգում, չգնահատված,,: Հիսուսը տեսնում է քեզ: Նա ուզում է քեզ մոտ գալ և քեզ օրհնել: Մյուս մասն էլ հավանաբար մտածում է.,, Ոչ ոք իմ մասին չի մտածում: Նրանք ինձ ճիշտ չեն համարում: Ես աղոթել եմ օգնության համար, բայց ոչին չի ստացվել,,: Ես ասում եմ ձեզ՝ դուք մոռացված չեք: Հիսուսը գալու է և օգնելու է քեզ :

Սիրելի երիտասարդներ, սիրելի քույր-եղբայրներ, հավանաբար դուք ունենք նաև հետևյալ զգացումը. ,, Իմ օժանդակությունը Աստծո գործին կարևոր չէ: Նա երբեք դա չի տեսնելու: Ոչ ոք շնորհակալություն չի ասում: Ինչ ես անում եմ, ոչ մի նշանակություն չունի,,:

Հիսուսը տեսնում է յուրաքանչյուր ծառայություն և յուրաքանչյուր զոհաբերություն: Սուրբ Հոգու միջոցով նա մեզ ասում է՝ մի մտահոգվիր, ես տեսնում եմ այն, ինչ անում ես ինձ համար և ես քեզ դրա համար օրհնելու եմ: Անգամ, եթե այսօր մենք շատ- շատ ենք, կարող ենք վստահ լինել, որ Հիսուսը յուրաքանչյուրին անձնապես ճանաչում է: Հիսուսն ուզում է յուրաքանչյուրին անհատապես ու յուրահատուկ ձևով օրհնել: Ես մի հատված եմ կարդացել ծանոթ պատմությունից, երբ աշակերտները ծովի վրա էին ու փոթորիկ բարձրացավ: Ուժեղ քամի էր, և նավակը այս ու այն կողմ էր նետվում: Նրանք հանկարծ տեսան, որ ինչ որ մեկը քայլում է ջրի վրայով: Նրանք իսկապես վախեցան: Ի՞նչ է հիմա կատարվում: Հիսուսն անմիջապես ասաց.,, Մխիթարվեցեք, ես եմ, մի վախեցեք,,: Պետրոսը պատասխանեց նրան. ,,Տեր ,այդ դու ե՞ս, ուրեմն հրամայիր ինձ ջրի վրայով քեզ մոտ գալ,,: Ապա հետևում է մեր այսօրվա տեքստի խոսքը.,,Եվ նա ասաց՝ արի: Եվ Պետրոսը նավակից իջնելով՝ քայլեց ջրի վրայով ու եկավ Հիսուսի մոտ,,:

Եթե դու ուզում ես Հիսուսի մոտ գնալ, դու պետք է նրա օրինակին հետևես և անես այն, ինչ նա է արել - սա է վճռականը:

40 000 մասնակիցներ էին հավաքվել Քափշտատի մարզադաշտում համերգի, ելույթների և ժամերգության

Սա մի գեղեցիկ պատկեր է մեր փրկության համար: Հիսուսը մեզ կանչում է՝ ,,Արի,,: Մեղքի մեջ ընկնելուց ի վեր Հիսուսը կանչում է մարդկանց, բոլոր մարդկանց՝ ,, Արի ինձ մոտ, խնդրում եմ: Ես ուզում եմ քեզ տանել ինձ հետ դեպի հավիտենական միասնություն,,: Սա Աստծո կոչն է մարդկությանը՝խնդրում եմ, արի: Սա ընդհանրական կոչ չէ, այլ՝ անձնական կոչ: Աստված կանչում է յուրաքանչյուր մարդու անհատապես՝ ,,Խնդրում եմ, արի ինձ մոտ,,: Այդ կանչը վերաբերում է նաև մեզ՝ եղբայր, քույր, արի դեպի Հիսուսը: Նա ուզում է քեզ և ինձ իր հետ դեպի հավերժություն տանել:

Այսօր Հիսուսը կանչում է մեզ՝ Արի,ես ուզում եմ այստեղ ու հիմա քեզ հետ միասնություն կազմել: Կամ, որպեսզի այս միտքը այսօրվա նշանաբանի ներքո արտահայտենք, կինչի այսպես՝ ,, Եկեք, ես ուզում եմ ձեր մեջ ապրել և արարել: Թույլ տվեք լինել ձեր կյանքի մասնիկը: Կիսեք ձեր մտքերն ու կյանքը ինձ հետ: Ավելի մոտ եկեք,,:

Այս կանչը չի գալիս որևէ կազմակերպությունից, նաև՝ ձեր ծնողներից: Հենց ինքը՝ Հիսուս Քրիստոսն է, ով կանչում է ձեզ, հենց քեզ, քեզ և քեզ՝ արի: Ես ուզում եմ, որ դու իմ թագավորություն գաս: Արի, ես ուզում եմ քեզ հետ ապրել: Եվ երրորդ կանչը՝ արի, ես քո կարիքն ունեմ: Արի և ծառայիր ինձ: Հիսուսի այս կանչը վերաբերում է մեզնից յուրաքանչյուրին: Այդ կանչն ուղղվեց նաև Պետրոսին, և նա նրան հետևեց: Պետրոսը պետք է ինչ որ բան աներ, որը մարդկային տեսանկյունից անհնար էր, նա պետք է ջրի վրայով քայլեր: Մարդկային տեսանկյունով դա գժություն էր, անհնար էր: Սակայն, Հիսուսն ասում է Պետրոսին՝ արի: աներ այն, ինչ Հիսուսը նրան ասում էր, նա պետք նրա օրինակին հետևեր:

Եղբայր և քույր, սա մեզ համար վճռական է: Եթե մենք հետևում ենք և ուզում ենք նրա մոտ ճանապարհ՝ մենք պետք օրինակին, մենք պետք Հիսուն է ուզում, մենք ինչ Հիսուսն է ասում: հավատալը և եկեղեցի չէ միայն բարի գործեր չէ միայն աղոթելն ու կատարելը: Եթե դու ուզում ես Հիսուսի մոտ գնալ, դու պետք է հետևես նրա օրինակին – իսկ սա վճռորոշն է- անես այն, ինչ նա է արել:

Ես գիտեմ, մարդկային տեսանկյունով դա հնարավոր չէ: Սակայն Պետրոսը գիտեր՝ եթե Հիսուսը սա ինձ հրամայում է, ուրեմն ես կարող եմ դա: Ի՞նչ է նշանակում նրա օրինակին հետևել և անել այն, ինչ Հիսուսն է արել: Իր երկրային կյանքի ընթացքում Հիսուսը մի նպատակ էր հետապնդում՝ նա ուզում էր կրկին իր Հոր մոտ վերադառնալ: Մնացած ամեն ինչը նրա համար էական չէր: Նա ուզում էր իր առաջադրանքն իրականացնել և Հոր մոտ վերադառնալ: Դա ուներ բացարձակ առաջնայնություն:

Եթե մենք ուզում ենք Հիսուսի մոտ գնալ, մենք պետք է առաջնայնությունն ամրագրենք: Մեզ համար առաջնայնություն ունի Աստծո թագավորություն գնալը: Դա մեզ համար ամենակարևորն է: Դա այն ճանապարհն է, որը մենք ուզում ենք գնալ:

Հիսուսը հնազանդ էր: Ինչ էլ լիներ, նա միշտ կատարում է իր Հոր կամքը, բոլոր իրավիճակներում, բոլոր հանգամանքներում: Ոչ ոք և ոչինչ չէր կարող նրան հեռու պահել անելու այն, ինչ Աստված է նրանից պահանջում: Հիսուսի օրինակին հետևելը նշանակում է Աստծուն լսել, ինչ էլ լինի, յուրաքանչյուր իրավիճակում՝ առանց բացառության: Մենք հետևում ենք Աստծո պատվիրաններին: Այստեղ վիճարկում չկա, այստեղ փոխհամաձայնություն չկա – դա Աստծո կամքն է, որը ես կատարում եմ, և վերջ: Հիսուսը լի էր սիրով և մարդկանց սիրում էր այնպես, ինչպիսին նրանք կան: Հիսուսի օրինակին հետևելը նշանակում է, որ բարձրյալի սերը առաջնայնություն ունի: Մենք պետք է բոլորին սիրենք: Հիսուսը պատրաստ էր

Մեր սերը Տիրոջ հանդեպ այն է, ինչը մեզ մոտիվացնում է լսելու

ներելու: Նա անգամ ներում էր իր թշնամիներին: Եվ մենք պետք է նրա օրինակին հետևենք: Իհարկե, սա նշանակում է պայքար, դա հեշտ չէ: Սակայն, մենք պետք է ձգտենք, որ բոլորին ներել կարողանանք-նաև՝ մեր թշնամիներին:

Մեկ անգամ ևս նշենք, որ մարդկային տեսանկյունով դա անհնար է:Սակայն, Աստծո օգնությամբ և քանի որ Հիսուսն է դա մեզնից պահանջում, քանի որ նա դրա համար մեզ ուժ է տալիս, մենք ի վիճակի ենք դա անել: Վստահիր նրան: Նա քեզնից չի պահանջում այն, ինչը չես կարող անել: Եթե նա քեզ ինչ ոչ բան է խնդրում, օգնում է քեզ: Դու պետք է միայն ցանկանաս:

Ուրեմն՝ ինչպես ասվեց, սա ռիսկային է: Եվ ես, այս առումով, զարմանում եմ Պետրոսի վրա: Նա կարողացավ նավակից իջնել և ջրի վրայով քայլել: Մենք գիտենք, որ Պետրոսը լավ լողորդ էր: Մի այլ պատմություն է դրա մասին տեղեկացնում : Սակայն, այդպիսի եղանակային պայմաններում, քամու և հզոր ալիքների պայմաններում դա կյանքի համար վտանգավոր էր: Նա դա գիտեր: Խեղդվելու վտանգը շատ մեծ էր: Սակայն, նա ռիսկի դիմեց: Նա արհամարհեց այդ վտանգը:

Սիրելի քույր-եղբայրներ, Քրիստոսին հետևելը իր հետևանքներն ունի: Շատերը հապաղում են Քրիստոսին և նրա օրինակին հետևել, նրա օրենքները կատարել, սիրել ու ներել, քանի որ այն իր հետևանքներն ունի: Ով Քրիստոսին լսում է և նրան հետևում, հաճախ կյանքում ավելի քիչ է հաճելի պահեր ունենում: Նա պետք է բավարարվի քչով: Ով միշտ հետևում է օրենքին, քիչ փող, կյանքի քիչ հաճույք, քիչ փառք և քիչ հաջողություն է ունենում: Եթե մենք ուզում ենք Հիսուսի մոտ մնալ և նրանով ապրել, վտանգ կա, որ մենք ավելի քիչ կստանանք, քան՝ մյուսները: Սակայն, մենք դիմում ենք ռիսկի հանուն Հիսուսի կամքի:

Հիմա որևէ մեկը կարող է ասել.,, Այո, դա ռիսկային է: Դուք միշտ մեզ սովորեցնում եք, որ մենք պետք է ներենք, որ ուժին ուժով չպետք է պատասխանենք, այլ՝ ներելով: Սակայն, դրանով մեծ է դառնում վտանգը, որ մենք որպես թույլ կընկալվենք,,: Այո, այս խենթ աշխարհում, որտեղ մենք ապրում ենք, այդպես է: Ով ուզում է ներել, թույլ է համարվում, քան նա, ով որ վրեժխնդրությունից բացի այլ լուծում չի տեսնում: Ուրեմն՝ նա ներում է: Աշխարհում ներելը թուլության նշան է համարվում: Եվ մենք հաճախ նույնպես թույլ ենք ընկալվում, քանի որ մենք ուզում ենք ներել: Եկեք դիմենք այդ ռիսկին և հետևենք Հիսուսի օրինակին:

Շատերը հավանաբար կասեն.,, Այո, բայց ինձ մոտ չի ստացվում միշտ հնազանդ լինելը, բոլորին սիրելը, միշտ հավատարիմ մնալը և բոլորին ներելը: Եթե

Շրջանային առաքյալ Միխայել Դեփփներ / Կոնգոյի ԴՀ/

Շրջանային առաքյալ Ռյուդիգեր Քրաուզե / Հյուսիսային և Արևելյան Գերմանիա/

Շրջանային առաքյալ Չիչի Չիսեքեդի / Կոնգոյի ԴՀ/

Շրջանային առաքյալ Ջոն Լ. Քրիլ / Հարավային Աֆրիկա/

ես վերջում դրան չեմ հասնում, ամեն ինչ կորցնում եմ, ոչ միայն այն, որ ես Աստծո թագավորություն չեմ գնալու, այլ, որ երկրի վրա իմ ողջ կյանքում ես վնասներ եմ ունեցել: Ես միայն կորցնող եմ,,: Սակայն, դա հենց ռիսկն է, որին պետք է դիմենք:

Սիրելի քույր-եղբվայրներ, մեկ անգամ ևս՝ մենք պետք է ռիսկի դիմենք և Հիսուսին հետևենք: Սա ես ցանկանում եմ բոլորիս: Դու չես զղջա, քանի որ Հիսուսը հավատարիմ է: Նա օգնելու է քեզ: Նա օրհնելու է քեզ, տանելու է իր թագավորություն: Եվ դու այնտեղ նրա թագավորության մասն ես կազմելու: Դու ղեկավարելու ես նրա հետ: Դրա համար էլ արժե Հիսուսին հավատարիմ մնալը: Խնդրում եմ, ռիսկի դիմիր, դու չես զղջա:

Պետրոսը դիմեց ռիսկի: Նա իջավ նավակից, և դա գործեց: Դա հրաշք էր: Նա կարողացավ ջրի վրայով Հիսուսի նման քայլել: Ինչու՞: Քանի որ նա համաձայն էր այդ մոտիվացիային: Նա նավակում գտնվողների չասաց.,, Ապա նայեք: Ես հիմա մի արտակարգ բան ցույց կտամ,,: Նա ջրի վրայով չքայլեց, որպեսզի պարծենա մյուսների մոտ: Նա դրանով չէր ուզում մյուսներին ցույց տալ թե՝ ես ավելի լավն եմ, քան՝ դուք: Նման մտքեր նրա մոտ բոլորովին չծագեցին:

Նրա միակ միտքն այն էր՝ ես ուզում եմ Հիսուս մոտ գնալ: Դա էր նրա մոտիվացիան: Նրա համար միևնույնն էր, թե մյուսներն ինչ կմտածեն իր մասին: Նրա համար միևնույնն էր, թե ինչ որ արտակարգ բան էր անում: Նրա միակ ցանկությունն էր՝ ես ուզում եմ Հիսուսի մոտ գնալ և դրա համար անում եմ այն, ինչ նա է ասում:

Սիրելի քույր-եղբայրներ, երբ մենք պահում ենք Տիրոջ պատվիրանները, եթե մենք հավատարիմ ենք Քրիստոսին, դա անում ենք ոչ թե նրա համար, որ ուրիշներին ցույց տանք, որ մենք ամենալավ մարդիկ ենք: Մենք չենք ուզում ավելի լավ քրիստոնյաներ լինենք, քան՝ մյուսները: Մենք չենք ուզում ոչ մեկի վրա տպավորություն գործել: Մեր շարժման հիմքը բոլորովին այլ է: Քանզի մենք բոլորս գիտենք, որ մենք դա չենք կարող: Մենք թույլ ենք դրա համար: Դա անհնար է:

Մեր սերը Տիրոջ հանդեպ այն է, որ մեզ մոտիվացնում է հնազանդ լինել: Քանի որ մենք սիրում ենք Հիսուս Քրիստոսին, անում ենք այն, ինչ նա է ուզում: Քանի որ մենք սիրում ենք Աստծուն և ուզում ենք նրա հետ միասնություն կազմել, հնազանդ ենք և մեր կյանքը ձևավորում ենք Ավետարանի համաձայն: Սա է մեր մոտիվացիան: Եվ քանի որ այդպես է, Հիսուսն օգնում է մեզ անել այն, որն անհնար է թվում: Եթե մենք ուզում ենք ավելի լավ լինել, քան մյուսները կամ ուզում ենք տպավորություն գործել նրանց վրա, դրան չենք հասնի: Բայց, եթեմեր մոտիվացիան պարզ է, մեր ցանկությունը Հիսուսի մոտ գնալն է և նրա հետ միասնություն կազմելը, Աստված օգնում է մեզ: Մարդկանց համար անհնար է: Սակայն, Հիսուսի հետ հնարավոր է:

Դուք գիտեք, թե ինչպես է ավարտվում Պետրոսի պատմությունը: Նա իջնում է նավակից, գնում է ջրի վրայով, և հանկարծ- ինչ- որ պատճառով, որը ես չգիտեմ- նայում է ջրին, տեսնում է ալիքները և սարսափում: Նա սկսում է սուզվել: Նա մոտ էր գտնվում մահին: Վերջին պահին նա կանչում է՝ Տեր, օգնիր ինձ: Հիսուսն անգամ մեկնում է ձեռքը, բռնում է նրան և ասում՝ ,, Դու փոքրահավատ, ինչու՞ ես կասկածում,,:

Այս պատմությունը հետաքրքիր է Հիսուսի

տեսանկյունով: Նրա համար քամին և ալիքները խանգարելու հիմքերը չեն, որոնց պատճառով Պետրոսը չկարողացավ իրեն պահել: Միակ խնդիրը կասկածն էր, Պետրոսի թերի հավատը: Այդ գործում դժվարը փոթորկոտ ծովն ու քամին չէին, այլ՝ թերի հավատը:

Սիրելի քույր-եղբայրներ, իսկապես, մենք տանջվում ու տառապում ենք: Մենք պետք է նաև զոհաբերություն կատարենք, և հաճախ մեր հավատի պատճառով որոշ բաներ ենք բաց թողնում՝ մեր հավատարմությունը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Սակայն, այդ տառապանքները վտանգավոր չեն մեզ համար: Դրանք չեն կարող մեզ ետ պահել Աստծո թագավորություն գնալուց: Վտանգը դրսից չի գալիս, այն գալիս է ներսից: Եթե մեր հավատը թույլ է, ապա վտանգավոր է:

Եթե մենք Հսուսին այլևս չենք վստահում և կարծում ենք, որ այն, ինչ Հիսուսը պահանջում է մեզանից, անհնար է, ապա դա վտանգավոր է: Եթե մեր հավատը թույլ է և մենք այլևս չենք հավատում Հիսուսի խոստումներին, մեզ հարց ենք տալիս՝ արժե՞ այս ամենը: Պետք է՞ իսկապես այս կամ այն բանից հրաժարվել: Դրա համար իսկապես վնաս կկրե՞նք Աստծո թագավորությունում, եթե Տիրոջն ու նրա խոստմանը վստահենք: Այդ դեպքում մենք կթուլանանք: Սակայն, մենք պետք է հավատի մեջ ուժեղ մնանք:

Իսկապես, ժամանակ առ ժամանակ պատահում է այնպես – ինձ հետ էլ է այդպես լինում, կարող եք վստահ լինել, որ մենք թուլանում ենք և մեղք ենք գործում և չենք անում այն, ինչը Հիսուսն է մեզնից պահանջում: Այդ դեպքում մենք հասկանում ենք, թե ինչ թույլ ենք: Եվ երբեմն էլ կորցնում ենք արիությունը և ասում ենք՝,, Ախ, ես երբեք դա չեմ կարող անել,,:

Քույր-եղբայրներ, հավանաբար կա քույր կամ եղբայր մեր մեջ, ով անմիջապես ասած

կլինի՝,, Ես դա չեմ կարող անել: Ես բավարար չափով բարի չեմ, բավարար չափով հավատարիմ չեմ,,: Դու կարող ես: Խոսիր Հիսուսի հետ և ասա նրան՝,, Ես ուզում եմ: Ես ուզում եմ հավատարիմ մնալ: Ես ձգտում եմ քեզ հետ միասնության, խնդրում եմ, օգնիր ինձ,,: Եվ Հիսուսը դա կանի: Նա կուժեղացնի քո հավատը: Սակայն, դու պետք է այդ ցանկությունը քո սրտում կրես, ինչպես Հիսուսը, ով ուզում էր իր Հոր մոտ վերադառնալ:

Բոլոր նրանք, ովքեր ուզում են իսկապես Աստծո թագավորություն գնալ և պատրաստ են Հիսուսին հետևել, դրա համար ուժ և ողորմածություն կստանան, որի կարիքը նրանք ունեն: Վստահեք Հիսուսին: Լսեք նրա կանչը: Նա ինքն է ձեզ կանչում՝,, Արի,,: Պատասխանեք այդ կանչին և արեք այն, ինչ Հիսուսն է արել: Ապրեք նրանով ու գործեք նրանով: Անգամ, եթե ձեզ անհնար է թվում, դուք դա կանեք: Եթե Հիսուս Քրիստոսի հանդեպ սերը ձեր մոտիվացիան է, Հիսուսը ձեզ ուժ կնվիրի, որի կարիքը դուք ունենք թագավորություն գնալու համար: Եվ դուք արդեն միասնություն կկազմեք նրա հետ- ոչ միայն երկնքում, արդեն այստեղ, դուք կապրեք, թե ինչ հրաշալի է Հիսուսի հետ ապրելը և նրանով գործելը: Ամեն:

Հիմնական մտքեր

Առանց հապաղելու մենք գնում ենք հետևելու ճանապարհով, որը մեզ տանում է Տիրոջ մոտ:

Մեր հետևելը Տիրոջ կանչի պատասխանն է: Մենք պատրաստ ենք զոհաբերություն կատարել, քանի որ մենք սիրում ենք Աստծուն ու վստահում ենք: Մյուս կողմից՝ Աստված մեզ ունակ է դարձնում հավատարիմ մնալու մինչև նպատակին հասնելը :

Շնորհակալության խրատանի

Լուսանկարը՝ ՆԱԵ Պապուա Նոր Գվինեա

Միշտ ամեն ինչ համար շնորհակալ լինե՞լ: ,, Անիրական է,- ասում է գլխավոր առաքյալ Ժան- Լյուք Շնայդերը,,: Ապա բացատրում է, թե դա իսկապես ինչպես պետք է հասկանալ: 2017-ի հոտեմբերի 1-ի Պորտ Մորսեբիում / Պապուա Նոր Գվինեա/ անցկացված ժամերգության հիմնական մտքերը:

,,Աստված մեզ կոչ չի անում ամեն օր, ամբողջ ժամանակ անկեղծ և ուրախ Ալլելուա երգել,- ասում է գլխավոր առաքյալը,- ոչ, մենք պետք է շնորհակալություն հայտնենք հանուն Հիսուս Քրիստոսի,,:

Շնորհակալություն հայտնել ամենից առաջ Հիսուս Քրիստոսով փրկության համար, որն ընդգրկում է բոլոր ժամանակները՝

- Անցյալ՝. ,, Սիրուց ելենելով նա իր կյանքը տվեց մեզ համար : Երբ մենք ստիպված ենք տառապելու, ապա գիտենք, որ Հիսուսն էլ է տառապել: Այսպես, մենք կարողանում ենք նաև դժվար պահերին նրա սիրո համար շնորհակալ լինել,,:
- Ներկա՝. ,, Նա ներում է մեր մեղքերը: Ինչ էլ մենք միշտ արած լինենք, մենք միշտ կարող ենք նորից նրա մոտ գալ,,:
- Ապագա՝. ,, Նա ցանկանում է, որ մենք կիսենք այն փառահեղությունը, որը Հայրն է նրան տվել: Այդ փառահեղությունն այնքան մեծ է լինելու, որ մենք այլևս չենք հիշելու տառապանքի մասին, որը մենք կրել ենք երկրի վրա,,:

Ամեն ժամանակ հանուն Քրիստոսի շնորհակալություն հայտնել, դա նշանակում է խոսքով և գործով նրան հետևել՝

- Հնազանդությամբ և հավատով. ,, Մենք այնքան շնորհակալ ենք, որ մեր փրկությունը կախված է միայն հնազանդությունից և հավատից, և ոչ թե՝ իմաստությունից և հարստությունից: Մեզնից ոչ բոլորը կարող են ասել՝ ես շատ ինտելիգենտ եմ, ես մեծ գիտելիքներ ունեմ: Սակայն, մենք բոլորս, կարող ենք հնազանդ լինել և բոլորս կարող ենք հավատալ,,:
- աղոթքով. ,, Մենք այնքան շնորհակալ ենք, որ Սուրբ Հոգին մեզ ուսուցանում է, թե մենք ինչպես պետք է աղոթենք, և որ մենք երաշխավորություն ունենք, որ, եթե մենք այն նույնը խնդրենք, ինչը Հիսուսը մեզ համար կխնդրեր, մենք այն կստանանք,,:
- ներելով .,,Մենք շնորհակալ ենք ողորմածության համար, որին մեզ Հիսուսը թույլ է տալիս արժանանալու և ընդունում ենք, որ մեղավորն էլ է նույնը ստանում: Մենք երջանիկ ենք, երբ մեղավորներն ընդունվում են Աստծո կողմից,,:
- վստահությամբ. ,,Մենք այնքան շնորհակալ ենք, որ ոչ ոք, ոչ մի ոգի, ոչ մի իրավիճակ չեն կարող ստիպել մեզ կասկածելու Հիսուս Քրիստոսին: Ինչքան էլ երկար ես Հիսուսի մոտ մնամ, ոչ մի ուժ չի կարող ինձ ստիպել նրանից հեռանալ,,:
- համբերատար սպասելով. ,, Հիսուսը մեզ կանչել է իրեն ծառայելու: Մենք պետք է այդ առաջադրանքն իրականացնենք մինչև վերջ, քանի որ, ամեն ինչ նրանց բարուն են ծառայում, ովքեր սիրում են Աստծուն և նրա խորհրդով են գործում,,:

,,Այս ձևով մենք կարող ենք Աստծուն բոլոր բաների համար միշտ շնորհակալ լինել,- պարզաբանեց գլխավոր առաքյալ Շնայդերը,- մենք շնորհակալ ենք, քանի որ Աստված մեզ սիրում է: Մենք շնորհակալ ենք, քանի որ մենք այնքան օրհնված ենք, իսկ Աստված պատասխանում է մեր շնորհակալությանը նրանով, որ նա մեզ էլ ավելի շատ օրհնանք է նվիրում,,:

ԲԱՐԻ ՀՈՎԻՎԸ

ԸՍՏ 23-ՐԴ ՍԱՂՄՈՍԻ

Սաղմոսները բանաստեղծություններ են, որոնք երգվում էին, այսինքն՝ երգի տեքստեր են: Մի քանիսից ենթադրում են, որ դրանք գրվել են Դավիթ թագավորի կողմից, ինչպես նաև, այս՝ 23-րդ սաղմոսը: Դավիթն այս սաղմոսում արտահայտում է իր վստահությունը Աստծո հանդեպ:

Տերն իմ հովիվն է,
և ինձ ոչինչ չի պակասի:

Դալար վայրերում նա ինձ բնակեցրեց
և հանդարտ ջրերի մոտ ինձ սնեց:

Նա կենդանացրեց ինձ,
հանուն իր անվան առաջնորդեց ինձ արդարության ճանապարհով:
Եթե նույնիսկ անցնեմ





մահվան ստվերների միջով,
չեմ վախենա չարից,
Քանզի դու, Տեր, ինձ հետ ես:
Քո ցուպն ու գավազանն ինձ
կմխիթարեն:

Իմ առջև սեղան
պատրաստեցիր
հալածիչներիս աչքերի
դիմաց:
Գլուխս յուղով օծեցիր,
և քո բաժակն ինձ արբեցրեց
անխառն գինու պես:

Ողորմությունը քո, Տեր,
պիտի հետևի ինձ կյանքիս
բոլոր օրերին,
երկար օրեր ես Տիրոջ տանը
պիտի բնակվեմ:

Աղբյուրը՝ Ամսագիր՝ մեր՝ երեխաներս, հրատարակություն 04/2018; ձևավորումը՝ Միրելլա Ֆորթունատոյի

ԱՅՑ ՋՈՒԼԻՈՅԻՆ՝ ՍԱՆԹՈ ԱՆԴՐԵՈՒՄ / ԲՐԱԶԻԼԻԱ/

Ես Ջուլիոն եմ, տասներկու տարեկան եմ և ապրում եմ Սանթո Անդրեում որպես 700 000 բնակիչներից մեկը: Քաղաքը գտնվում է Սան Պաուլո դաշնային պետությունում: Ես հաճախում եմ կրտսեր դպրոցի վեցերորդ դասարան: Այստեղ՝ գրքերի տոնավաճառում, ինձ տեսնում եք իմ դասընկերների և իմ կրտսեր եղբոր հետ:

Իմ սիրելի առարկան մաթեմատիկան է, ես անգամ մասնակցել եմ մաթեմատիկայի օլիմպիադային: Երկու անգամ ես եղել եմ երրորդ լավագույնը և դրա համար արժանացել եմ շքանշանների:

Իմ շան անունը Սկուբիդու է: Նա միայն երեք թաթ ունի, քանի որ ավտոբուսը վրաերթի է ենթարկել, երբ նա երկու տարեկան էր: Բարեբախտաբար, նա ողջ է մնացել:

Իմ հոբբին սկեյթբորդ քշելն է: Շաբաթական երկու անգամ ես գնում եմ պարապմունքների և մասնակցում եմ սկեյթբորդի մրցաշարերին:

Զատիկի ժամանակ մենք՝ բարզիլացիներս, հաճույքով ուտում ենք փաքոքա: Այդ քաղցրավենիքը բաղկացած է մանրացրած գետնընկույզից և շաքարից:

Դրանից բացի, ես սովորում եմ դաշնամուր նվագել: Դա ինձ շատ հաճույք է պատճառում: Ես հույս ունեմ, որ հետագայում կարող եմ նվագել մեր համայնքի ժամերգությունների ժամանակ:

Ես մկրտվել և կնքվել եմ Սանթո Անդրեի մեր համայնքում: Այդ համայնքը իմ ընտանիքի համար մեծ նշանակություն ունի: Իմ նախատատը ճանաչել է նորառաքելական եկեղեցին, երբ նա 17 տարեկան էր: Ավելի ուշ նրա հետ եկեղեցի է հաճախել նաև իմ նախապապը և ընդունել է հավատքը: Նրանք ամուսնացել են այդ համայնքում: Երկուսն էլ արդեն հավիտենականության մեջ են: Նրանց հինգ զավակներից մեկը իմ տատիկ Էդնան է, նա էլ իր ամուսին Ջոզե Անտոնիոն է տարել եկեղեցի: Այսօր նա մեր առաքյալն է: Եվ ընտանիքի պատմությունը շարունակվում է: Նաև իմ հայրն է իմ մայրիկի միջոցով ճանաչել նորառաքելական հավատքը և կնքվել: Իմ մայրիկը ղեկավարում է մեր համայնքի երգչախումբը:

Այստեղ մեզ այցի են եկել տատիկն ու պապիկը: Սովորաբար մենք չորսով են ապրում մեր տանը՝ իմ հայր Ֆաբիոն, իմ մայր Լաիսը, ես և իմ եղբայր Ռաուլը: Ի դեպ, ես բացահայտել եմ նրա անվան ծագումը, նա ունի այն անունը, ինչ մեր շրջանային առաքյալ Ռաուլ Մոնտես դե Օկան, ում ես շատ եմ սիրում:

Ամեն կիրակի, ժամերգությունից հետո ես հաճախում եմ կրոնական պարապմունքների: Մենք ունենք մի շատ սիրալիր ուսուցչուհի, նրա անունը Կարոլինա է: Նա մեզ խորհուրդ է տվել ժամերգության ժամանակ զոհասեղանի մոտ հնչող քարոզից նշումներ անել: Դա մեզ օգնում է Աստծո խոսքը ուշադրությամբ լսելուն:

Զարդի ժամանակ մենք՝ բարձիացիներս, հաճույքով ուսում ենք փաքրքա: Այդ բաղդրավենիքը բաղկացած է մանրացրած գետնընկույզից և շաքարից:

Լուսանկարը՝ Մարսել Ֆեդրեի

Ընտրություն - առաջարկի և առաջադրանքի միջև

Ողորմածությամբ ընտրված – ինչու՞: Այս հարցին պատասխան չկա: Քանի որ հարցը պետք է հնչի այսպես՝ ընտրված լինել – ի՞նչ նպատակի համար: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերի մեկնաբանությունները նորառաքելական ինքնահասկացողության կենտրոնական հասկացություններից մեկի վերաբերյալ:

,, Բայց դու, ով իմ ծառա Իսրայել, ով Հակոբ, որին ընտրեցի, ով դու Աբրահամի զավակ, որին սիրեցի, դու մի վախեցիր, քանզի ես քեզ հետ եմ, մի խաբվիր, քանզի ես եմ քո Աստվածը, ես զորացրի քեզ, օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով,, / Եսայի 41,8,10/:

Մարգարեի միջոցով Աստված դիմում է Իսրայելի ժողովրդին, որպեսզի նրանց հիշեցնի իր ընտրության մասին և նրան իր հավատարմությունը հաստատի: Այս խոսքը վերաբերում է նաև Նոր Ուխտի Աստծո ժողովրդին:

Ոչ միայն սեփական փրկության համար

Աստվածային ընտրության մասին մեր դավանաբանության մեջ այսպես է գրված / ՆԱԵԴ 4,5/.,, Ընտրությունը հիմնված է Աստծո կամքի վրա, որով ամեն մի մարդ և խմբեր կանչվում են որոշակի նպատակի համար և դրանով պատասխանատվություն են վերցնում:

Ընտրությունը Աստծո կողմից կատարվող կատարյալ անկախ ընտրություն է: Աստված ընտրում է մարդկանց, որոնց նա ցանկանում է, երբ ուզում է՝ առանց ստիպված լինելու դրա համար արդարանալ / Հռոմեաց. 9,14-17/՝

- մի կողմից նրանց սեփական փրկության համար;
- մյուս կողմից նրա համար, որ նրանք համագործակցեն իր փրկության պլանի կատարման գործում:

Մարդը չի կարող իր ընտրված լինելը ոչ հասկանալ, ոչ էլ՝ վաստակել, այնուամենայնիվ, նա պետք է դա ամրագրի:

Մնացած ամեն ինչը որպես ավտոմատիզմ

Նոյն ընտրվեց Աստծո կողմից, որպեսզի ջրհեղեղից փրկվի: Իր հավատի և հնազանդության շնորհիվ նա այդ ընտրությունը հաստատեց: Իսրայելի ժողովուրդը ընտրվեց, որպեսզի օրհնանք և փրկություն ստանա, նրա ընտրությունը պետք է ամրագրվեր նրանով, որ նա Մովսեսի օրենքին հավատարիմ մնար: Այս ընտրությունները հիմնված չեն մարդկային չափանիշների վրա: Դրանք Աստծո ազատ ընտրություններ էին / Մովսես 5-րդ, 7,6,7/:

Բացի դրանից, Աստված ընտրում է Իսրայելի ժողովրդին, որպեսզի նա իրեն ծառայի. ,, Դուք կլինեք ինձ համար որպես թագավորություն, որպես քահանայություն և որպես սուրբ ազգ: Իմ այս ասածները դու կհաղորդես իսրայելացիներին,,/2-րդ Մովսես 19,6/: Այս ընտրությունը ևս Աստծո անկախ, բանականությանը անհասանելի ընտրություն է:

Առաջարկ, որ պետք է ընդունվի

Նոր Ուխտում փրկությունը կայանում է մեղքից ազատման մեջ, այսինքն՝ Աստծուց բաժանումը վերացնելու մեջ: Մարդը կարող է փրկության հասնել միայն Հիսուս Քրիստոսի միջոցով: Փրկությունը գալիս է աստվածային ընտրությունից՝

- Որպեսզի մարդը երանելի դառնա, պետք է ճանաչի Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն և փրկության միակ միջնորդին: Ինքն իրենով նա չի կարող այս ճանաչողությանը հասնել, այն նրան պետք է հայտնվի Աստծուց: Սակայն, մարդը պետք է իր հավատով այդ ընտրությունը հաստատի: Այսպես, Աստված հայտնեց Սիմոն Պետրոսին, որ Հիսուս Քրիստոսը կենդանի Աստծո Որդին է և Պետրոսը հաստատեց իր ընտրությունը նրանով, որ հետևեց Տիրոջը / Մատթեոս 16; 16,17/:
- Փրկության պլանը նախատեսում է, որ ժամանակի վերջում, նոր արարչագործությունից առաջ փրկությունն առաջարկվելու է բոլոր մարդկանց: Սա կարող է միայն հնարավոր լինել, եթե Հիսուսը՝ բոլոր թագավորների թագավորը, իր խաղաղության թագավորությունը երկրի վրա հաստատի և սատանան ու նրա հետևորդները պարտվեն: Աստված ամբողջովին ազատ է ընտրում այն պահը, թե երբ երաշխավորի յուրաքանչյուր մարդու մուտքը դեպի փրկություն, նրա մահից առաջ կամ՝ հետո, Հիսուսի գալուստից առաջ կամ՝ հետո: Այս ընտրությունը հիմված է միայն նրա կամքի վրա: Մարդը ոչ կարող է դա բացատրել, ոչ էլ՝ դրա վրա ազդեցություն ունենալ:

Մերձավորին ծառայելու կոչ

Աստծո Նոր Ուխտի ժողովուրդը նա է, ով հավատում է Հիսուս Քրիստոսին, ով ընտրվում է նրա համար, որ ոչ միայն Քրիստոսով փրկվի, այլ նաև նրան ծառայի / ՆԵԴ 6,3,2/: Քրիստոսի եկեղեցու բոլոր անդամները կանչված են ծառայելու նրանով, որ նրանք

- Աստծուն գովաբանեն և երկրպագեն,
- Աստծո բարեգործությունները խոսքով ու գործով վկայեն,

Photo: Pavlo Vakhrushev – Fotolia.com

- Տարածեն Ավետարանը,
- Բարին գործեն:

Այս ծառայությունը դրված է ջրից և Սուրբ Հոգուց վերստին ծնվածների վրա,քանի որ նրանք կարողանում են առաքյալների ներգործությամբ ողորմածությունից բխող ճիշտ խոսքի տեղեկացումը լսել, բոլոր խորհուրդներն ընդունել և մեղքերի ներում ստանալ:

Ջրից և Սուրբ Հոգուց վերստին ծնված Աստծո զավակները ընտրվել են, որպեսզի Աստծո թագավորությունում առաջնեկներ դառնան: Իր գալստյան ժամանակ Հիսուս Քրիստոսը ողջերից և մահացածներից իր հետ տանելու է նրանց, ովքեր իրենց ընտրությունը հաստատել են նրանով, որ առաքյալների ծառայության միջոցով իրենց թույլ են տվել նախապատրաստվելու գալստյանը: Նրանք մուտք են ունենալու Քրիստոսի հետ միասնություն՝ առանց Վերջին դատաստանին ենթարկվելու: Խաղաղության թագավորությունում նրանք կազմելու են քահանայություն և մասնակցելու են բոլոր մարդկանց փրկության տեղեկացմանը՝ որպես Քրիստոսի սուրհանդակներ / Հայտնություն 20,6/:

Պաշտոնում՝ առանձնահատուկ առաջադրանքով

Ի սկզբանե Աստված առանձին մարդկանց է ընտրել, որպեսզի նրանց առանձնահատուկ առաջադրանք վստահի: Աբրահամն ընտրվեց, որպեսզի բոլոր ազգերի համար օրհնանք լինի, Մովսեսն ու Հեսուն ընտրվեցին, որպեսզի Իսրայելի ժողովրդին Ավետյաց երկիր առաջնորդեն: Հիսուսն էլ է որպես Աստծո ընտրյալ ներկայանում, ում Աստված ուղարկեց ծառայելու մարդկանց / Մատթեոս 12;18, Ղուկաս 9,35/:

Տերն ընտրել է իր աշակերտներին և ավելի ուշ նաև՝ առաքյալներին, իսկ Պետրոսին առանձնացրել է, որպեսզի նրան վստահի մի առանձնահատուկ առաջադրանք / Գործք 15,7/:

Մենք հավատում ենք, որ պաշտոնի ընտրությունը Աստոծ կամքի վրա է հիմնված և ոչ թե՝ մարդու: Այս առումով առաքյալն առաջադրանք ունի աստվածային կամքը ճանաչելու և դրա համաձայն գործելու:

Աստծո պատասխանը՝ հավատարմություն

Աստված հավատարիմ է՝ նա ավարտելու է սկսած գործը / Փիլիպեցիներին 1,6/: Իր փրկության պլանի համաձայն յուրաքանչյուր մարդ ունի փրկված լինելու հնարավորություն / Տիմեոթեոս Ա, 2,4/: Փրկության ընտրությունը փաստացի վերաբերում է այն պահին, երբ Աստված փրկություն է առաջարկում: Խաղաղության թագավորության վերջում բոլոր մարդիկ ճանաչելու են Հիսուս Քրիստոսին: Նրանք, ովքեր դուրս կմնան Աստծո հետ միասնությունից, կլինեն նրանք, ովքեր ոչ թե չեն ընտրվել, այլ չեն ընդունել առաջարկված փրկությունը:

Աստված պահպանում է եկեղեցին

Այն ժամանակից ի վեր, երբ հիմնվեց Քրիստոսի եկեղեցին, Աստված այն պահպանել է նրանով, որ նրան անհրաժեշտ սրբացում և ողորմածություն է երաշխավորել, որպեսզի այն՝ չնայած մարդկային անկատարությանը, կարողանա պատմության մեջ միշտ տեսանելի և ճանաչելի լինել: Նա նաև այն բանի համար է հոգացել, որ տեսանելի եկեղեցին իր միսիան իրականացնի, հատկապես, շարունակի տարածել Ավետարանը և կենդանի պահի հավատը Քրիստոսի հանդեպ :

Քրիստոսի եկեղեցու անդամներն այդ ծառայությունն իրականացնում են Աստծո և մերձավորի հանդեպ սիրուց: Եվ դա հատուկ ձևով վերաբերում է նաև մեզ, որ վերստին ծնվել ենք ջրից և Սուրբ Հոգուց, քանի որ Սուրբ կնունքի ժամանակ Աստծո սերը լցվել է մեր սրտերը:

Այդ ծառայությունը դրոշմված է նաև աստվածավախությամբ: Մենք պետք է գիտակցենք, որ փրկությունը մարդու կողմից կարող է ընտրվել, եթե նա Աստծո կողմից ընտրվի: Միայն Աստված ինքն է փնտրում իր ընտրյալներին: Այս ընտրությունը միստիկա է, որը մենք չենք կարող բացատրել, մի ընտրություն, որի վրա մենք չենք կարող մեր բարի գործերով ազդել:

Մինչև խաղաղության թագավորության հաստատումը Քրիստոսի եկեղեցուն պատկանելու են նրանք, որոնց Աստված ընտրել է փրկության և ծառայության համար: Դրանից էլ ելնելով՝ փրկության պլանի իրականացման համար անհրաժեշտ չէ, որ բոլոր մարդիկ Տիրոջ գալստից առաջ կնքնվեն և մկրտվեն:

Աստված մեզնից սպասում է, որ մենք նրան ծառայենք սիրով, առանց հոգնելու և, որ նրան վստահենք: Նա հոգ է տանելու, որ եկեղեցում միշտ բավարար մարդիկ լինեն, ովքեր այն բանի համար ընտրված կլինեն, որպեսզի իրենց առաջադրանքը իրականացնել կարողանան: Եվ նա դա անելու է նաև Մեծ Տխրության ժամանակ / Հայտնություն 12,6/: Ավետարանը պետք է տեղեկացվի երկրի վրա մինչև Աստծո կողմից ամրագրված վերջը:

Աստված իր զավակների կողքին է

Աստված հավատարիմ է նրանց, ում ընտրել է, որպեսզի նրանք կարողանան պատկանել թագավորական քահանայությանը: Նա հսկում է, որ ոչ մի ուժ չխանգարի նրանց լիակատարությանը և Քրիստոսի գալստյան ժամանակ համբառնալուն / Հայտնություն 12,5/: Մենք ոչ մի բան չգիտենք բոլոր մարդկանց փրկությունը տեղեկացնող Աստծո և Քրիստոսի քարոզիչների անհրաժեշտ թվի մասին / այս առումով 144 000 թիվը միայն խորհրդանշական է/: Ոչ ոք չի կարող ասել, թե ինչքան առաջնեկներ կլինեն այս և անդրշիրմյան աշխարհում :

Մենք համոզված ենք, որ առաքյալները գործելու են երկրի վրա մինչև թագավորական քահանայության հիմնվելը: Առաքյալների ծառայության միջոցով Աստված իր զավակներին, ովքեր հաստատել են իրենց ընտրված լինելը, կտա բոլոր անհրաժեշտ ուժերը, որպեսզի նրանք կարողանան նպատակին հասնել:

Աստված օգնում է իրեն ծառայողներին

Տերը մինչև վերջ օժանդակում է առաքյալներին, ում ինքը ընտրել է, նրանց առաջադրանքի կատարման մեջ /Մատթեոս 28,20/: Նա հսկելու է ժայռի պաշտոնը՝ Պետրոսի ծառայությունը, որը զբաղեցնում է գլխավոր առաքյալը, որպեսզի եկեղեցին չարի կողմից չհաղթվի / Մատթեոս 16,18/: Առաքյալների միջոցով լիազորված սպասավոր եղբայրները, ովքեր միասնության մեջ աշխատում են նրանց և գլխավոր առաքյալի հետ, կարող են հասկանալ Հիսուս Քրիստոսի օգնությունը: Նրա օգնության շնորհիվ նրանք մինչև վերջ կատարում են իրենց առաջադրանքը:

Ամփոփելով՝ ցանկանում եմ Հին կտակարանային մարգարեի մտքերը արդիականացնել և այսպես ձևակերպել.,, Մի վախեցիր, Քրիստոսի եկեղեցի, մի վախեցեք, Աստծո զավակներ, տեղի մի տվեք, դուք՝ սպասավորներ: Հիսուսը կանգնած է իր ընտրյալների կողքին,,:

Masthead
Publisher: Jean-Luc Schneider, Überlandstrasse 243, 8051 Zürich/Switzerland
Verlag Friedrich Bischoff GmbH, Frankfurter Str. 233, 63263 Neu-Isenburg/Germany
Editor: Peter Johanning

ԵՄՕ 2019՝ ծրագրի կազմում

Ծրագիրը բազմաբովանդակ է՝ արդեն շատ բան հստակ է նորառաքելական եկեղեցու 2019-ի Երիտասարդության միջազգային օրվա առումով: Ընթացքում են թեմաների գրացուցակի և ժամանակային օրացույցի կազմումը: Ինչ են ուզում մասնակիցները – առաջին արդյունքները:

Լուսանկարը՝ Օլիվեր Ռյութենի

2019-ի մայիսի 30-ից մինչև հունիսի 2-ը Դյուսելդորֆի /Գերմանիա/ տոնավաճառի հսկայական տարածքը սպասում է 35.000-40.000 մասնակիցների: Հռենոսյան երկրի մեծ քաղաքը դառնալու է աշխարհի բոլոր կողմերից եկող երիտասարդների հանդիպման վայրը – ինչպես տասը տարի առաջ էր՝ Եվրոպայի երիտասարդների օր 2009-ի ժամանակ: Արդեն հիմա, այս ֆոնին կազմակերպիչները ջանասիրաբար լծվել են աշխատանքի :

Այս եռօրյա մեծ միջոցառման ծրագրի շրջանակում տեղի են ունենում համացանցային քննարկումներ: Համացանցային հարցախույզին մասնակցում է ավելի քան 3000 մարդ՝ 11-34 տարեկան: Նրանք բաժանված են երեք խմբի՝ 11-17 տարեկան, 18-24 տարեկան, 25-34 տարեկան, ովքեր թույլ են տալիս բավականին հստակ գնահատելու իրենց պատասխանները:

Ժամերգությունները բարձր տեղ են գրավում

Տարիքային խմբերի մեջ երաժշտական ճաշակի ահագին տարբերություն կա: Նաև թեմաներն են տարբեր ձևերով գնահատվում՝ աստվածաշնչյան լուրջ թեմաներից մինչև խնջույք ցանկալի է դառնում: Հարցվածների 90 տոկոսը ժամերգության առաջարկի տեսանկյունով իր համաձայնությունն է արտահայտում Համբարձման և կիրակի օրվա ժամերգությունների առումով: Տարիքային բոլոր խմբերը կարող են նաև մասնակցել աշխատանքային քննարկումներին, ներկայացումներին և փողոցային երաժշտությանը: Սեմինարների ու բեմահարթակային քննարկումների կողմանակիցները ավելի մեծերն են :

,, Սոցիալական մեդիա,, թեմայով հետաքրքրված են ամենից առաջ 11-17 տարեկանները: Դրան հակառակ՝ ,, Ամուսնություն և ընտանիք,, ; ,,Կյանքի և ապագայի պլանավորում,, ; ,, Կյանքի ճգնաժամեր,, թեմաները ավելի շատ հետաքրքրում են 20 տարեկանից բարձրերին: Հարցվածների 80 տոկոսի համար հետաքրքիր են ,, Ապրված քրիստոնեություն,, ; ,, Կյանք մահից հետո,, և ,, Քրիստոսի գալուստը,, թեմաները: Ընդհանրապես, հավատի վերաբերյալ թեմաները հաճույքով են ընդունվում:

Նշանաբանը՝ Ես այստեղ եմ

Երիտասարդների նշանաբանն է՝ ,, Ես այստեղ եմ,,: Այս քաջալերող խոսքերն ասում է ինչպես Աստված մարդկանց, այնպես էլ՝ հակառակը: Այս առումով, Երիտասարդության օրվա մասնակիցների համար կարևոր է նաև անհատապես աջակցելը հետևյալ խոսքերով՝ ,, Ես միանում եմ: Ես գալու եմ: Ես ուզում եմ համագործակցել,,: 2017-ի նոյեմբերին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը և մի քանի շրջանային առաքյալներ արդեն ուսումնասիրել են տարածքը: Նրանք անչափ գոհ են իրենց տեսածից: Ամռանը մեկնարկում է գրանցման գործընթացը:

,,Միասնական զարգացում, միասին աճել,,

Արևմտյան Գերմանիայի նոր տարածաշրջանային եկեղեցու գլխավորի փոփոխությունը վերջնականորեն իրականացված է՝ եկեղեցու և քաղաքական ներկայացուցիչների կողմից տոնականորեն ընդունման ժամանակ նոր շրջանային առաքյալը ներկայացրեց ապագայի իր նպատակները:

2018-ի հունվարի 1-ից գերմանական Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի և Հեսսենի/ Ռայնլանդի// Սաարլանդի նախկին տարածաշրջանային եկեղեցիները միավորվեցին: 2018-ի փետրվարի 25-ին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը Հեսսենի շրջանային առաքյալ Բերնդ Քոբերշթայնին հանգստի ուղարկեց և այդ աշխատանքային տարածաշրջանը հանձնեց Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի շրջանային առաքյալ Ռայներ Շթորքին:

Այս ֆոնին, 2018-ի մարտի 5-ին նորառաքելական եկեղեցին Ֆրանկֆուրտ –Հյուսիս եկեղեցական համայնքում ընդունելություն էր հրավիրել : Հրավերքին հետևել էր շուրջ 50 այցելու՝ ավետարանական և կաթոլիկ եկեղեցիների, ինչպես նաև պետական նախարարությունների և քաղաքային իշխանության ներկայացուցիչների գլխավորությամբ: Ծրագիրը ղեկավարում էր եկեղեցու խոսնակ և եպիսկոպոս Փեթեր Յոհաննինգը:

Նպատակներ ապագայի համար

,, Միասնական զարգացում, միասին աճել,, - այս նշանաբանն էր դրել իր խոսքի կենտրոնում շրջանային առաքյալ Շթորքը : Նաև նոր պատասխանատվություն ստանձնելով՝ նա ուզում է հետևել իր մինչ այժմ ունեցած հիմնական սկզբունքներին՝

- ուժեղացնել տեղական համայնքները; դա նշանակում է շեշտել սեփական պատասխանատվությունը, հորդորել սեփական նախաձեռնության և համայնքներին մի շրջանակ տալ, որում նրանք կարողանան շարժվել:
- Ուշադրություն դարձնել ֆինանսական ռեսուրսներին: Ներկայիս վիճակը լավ է: Բայց կարևոր է ապագա սերնդի մասին մտածելը: Բացի դրանից, կարևոր է հավասարակշռություն ապահովել գերմանական շրջանների և խնամվող շրջանների 40 երկրների միջև, որոնց միայն 0,5-40 տոկոսն է կարողանում ինքնաֆինանսավորվել:
- Ակտիվ տարածել Ավետարանը՝ Հիսուսի ուսմունքը լինելու է արժեհամակարգ, որը մարդու համար հնարավոր է դարձնում միասնական լավ կյանքը: Դա փոխանցել շարունակելը չլինի մեկ դավանանքի գործ, այլ՝ Քրիստոսի ընդհանրական եկեղեցու առաջադրանքը:

Լուսանկարը՝ Ջեսիկա Քրեմերի

Նախատեսում

01.07.2018	Դեթմոլդ(Գերմանիա)
05.07.2018	Ուլան Բատոր (Մոնղոլիա)
08.07.2018	Մոսկվա(Ռուսաստան)
21.07.2018	Քինդու (Կոնգոյի ԴՀ)
22.07.2018	Քիսանգանի (Կոնգոյի ԴՀ)
26.07.2018	Տեմբո(Կոնգոյի ԴՀ)
29.07.2018	Կինշասա(Կոնգոյի ԴՀ)
10.08.2018	Մվամբա (Թանզանիա)
12.08.2018	Դար –Էս- Սալամ(Թանզանիա)
18.08.2018	Շյաուլյաի(Լիտվա)
19.08.2018	Ռիգա (Լատվիա)
16.09.2018	Մերլեբախ(Ֆրանսիա)
26.09.2018	Հոնգ Կոնգ (Հոնգ Կոնգ)
30.09.2018	Բրիսբեն (Ավստրալիա)

New Apostolic Church
International